

Հիմնական դրույթներ

2022 թվականին իրականացվող «Գյուղական Տուրիզմի Զարգացման» ծրագրի շրջանակներում նախատեսվում է հայտարարել դրամաշնորհային մրցույթի 3-րդ փուլը, որին մասնակցության իրավունք ունի յուրաքանչյուր կազմակերպություն, կոոպերատիվ կամ 18 տարին լրացած և ՀՀ քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձ:

Ծրագիրն ուղղված է խթանելու գյուղական համայնքներում գյուղական տուրիզմի զարգացմանը, գյուղական բնակիչներին հնարավորություն է ընձեռում ունենալ սեփական ներդրումը տուրիստական ծառայությունների մատուցման ոլորտում և ստեղծել նոր հնարավորություններ տեղացիների համար:

Փոքր եվ միջին դրամաշնորհների տրամադրում

Դրամաշնորհները նախատեսված են բոլոր այն մարդկանց համար, ովքեր պատրաստվում են իրենց գյուղական համայնքում ստեղծել կամ ավելի զարգացնել գյուղական տուրիզմի որևէ ճյուղ: Մասնակցության համար անհրաժեշտ է լրացնել դիմում հայտը և նշել այն անվանակարգը, որին ցանկանում եք դիմել:

1. Դրամաշնորհ «Նոր կառուցվող հյուրատուն»

Դրամաշնորհը նախատեսված է այն մարդկանց համար, ովքեր որոշել և արդեն իսկ սկսել են կառուցել կամ վերակառուցել հյուրատուն, որը հնարավորություն կունենա ընդունել զբոսաշրջիկների:

Ծրագրի տևողությունը չպետք է գերազանցի չորս ամիսը:

Ծրագրի իրականացման համար մեր կողմից տրվող դրամաշնորհի առավելագույն չափը չպետք է գերազանցի 1.500.000 ՀՀ դրամը: Իսկ հաղթողները պարտավորվում են ունենալ սեփական ներդրում՝ տրվող դրամաշնորհի առնվազն 100 % -ի չափով:

2. Դրամաշնորհ «Գործող հյուրատուն»

Դրամաշնորհը նախատեսված է այն մարդկանց համար, ովքեր ունեն արդեն իսկ գործող հյուրատուն և ցանկանում են այն ընդլայնել կամ էլ ստեղծել հետաքրքիր անկյուն զբոսաշրջիկների համար:

Ծրագրի տևողությունը չպետք է գերազանցի չորս ամիսը:

Ծրագրի իրականացման համար մեր կողմից տրվող դրամաշնորհի առավելագույն չափը չպետք է գերազանցի 1.500.000 ՀՀ դրամը: Իսկ հաղթողները պարտավորվում են ունենալ սեփական ներդրում՝ տրվող դրամաշնորհի առնվազն 100 % -ի չափով:



Դիմում-հայտը բոլոր վերը նշված անվանակարգերի համար լինելու է ընդհանուր, սակայն հատկացվող ֆինանսավորումը և պայմանները տարբեր են: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է ճիշտ ընտրել հենց Ձեզ համապատասխան անվանակարգը:

Դրամաշնորհին դիմելու վերջնաժամկետն է՝ **30.09.2022**, (դիմել մինչև 12:00 (GMT+4)):

Մասնակիցներին տրվող պահանջները

- Մասնակցության իրավունք ունի յուրաքանչյուր կազմակերպություն, կոոպերատիվ կամ 18 տարին լրացած և ՀՀ քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձ:
- Դրամաշնորհային ծրագիրը պետք է իրականանա բացառապես ՀՀ որևէ գյուղական համայնքում: Չեն ընդունվում բոլոր այն ծրագրերը, որոնք նախատեսված են իրականացնել քաղաքներում:
- Դրամաշնորհը շահելու դեպքում, մասնակիցը պարտավորվում է ունենալ սեփական ներդրում ըստ համապատասխան անվանակարգի:
- Դրամաշնորհի կուտակված հարկերը շահառուն պարտավորվում է վճարել սեփական միջոցների հաշվին
- Դրամաշնորհային ծրագրերի իրականացման ժամանակացույցը չպետք է գերազանցի չորս ամիսը:
- Նույն մասնակիցը չի կարող ստանալ մեկից ավելի անվանակարգերում ֆինանսական աջակցություն:
- Հաղթող մասնակիցները պարտավորվում են կնքել աշխատանքների իրականացման պայմանագիր:
- Ամբողջ ծրագրի իրականացման ընթացքում հաղթող մասնակիցները պետք է ներկայացնեն ֆինասական հաշվետվություն:

Ծրագրի իրականացման ժամանակացույց

Ժամանակ	Աշխատանք
Մինչև 30.09.2022	Դիմում-հայտերի ընդունում
01.10 – 30.11.2022	Ընդունված հայտերի ուղումնասիրություն և հաղթողների ընտրություն
01.12. – 15.12.2022	Պայմանագրերի կնքում հաղթողների հետ և աշխատանքների սկիզբ
15.12.2022 – 15.04.2023	Ծրագրերի իրականացման ժամկետ
15.04.2023 – 30.04.2023	Ծրագրերի մոնիթորինգ

Ժյուրիի անդամների կազմը

Ժյուրիի անդամները լինելու են անկախ և շահ չհետապնդող մասնագետներ: Նրանք կգնահատեն և կընտրեն յուրաքանչյուր անվանակարգի հաղթողներին:

Գնահատման չափանիշներ

Դրամաշնորհային ծրագրերը գնահատվելու են ըստ հետևյալ չափանիշների՝

- Մոտիվացիա
- Ծրագրի երկարաժամկետ իրականացում
- Սոցիալ-տնտեսական կայունություն
- Գյուղական միջավայրի ստեղծում
- Բնապահպանություն և բնական ռեսուրսների բարելավում
- Կրեատիվություն
- Չբոսաշրջային ակտիվություն
- Առավելագույն հյուրերի քանակ
- Նոր աշխատատեղերի ստեղծում
- Համայնքային զարգացում
- Գյուղական տուրիզմի զարգացում
- Չբոսաշրջիկների հետ հաղորդակցվելու հմտություններ
- Պատմամշակութային հուշարձաններ
- Բնության հուշարձաններ
- Գովազդ
- Սերտիֆիկատների առկայություն
- Այլ դրամաշնորհներին մասնակցություն
- Նկարներ
- Բիզնես ծրագրի իրատեսականություն

Հաղթողներին ընտրելու մեթոդներ

Ժյուրիի յուրաքանչյուր անդամ, ըստ գնահատման չափանիշների, գնահատում է բոլոր մասնակիցներին: Ամենաշատ միավոր հավաքած դիմորդների հայտերը քննարկում են հետագայում: Վերջնական հաղթողները որոշվում են միայն տեղանքը տեսնելուց և ուսումնասիրելուց հետո:

Մասնակիցները պետք է համապատասխանեն դիմում-հայտում նշված բոլոր պահանջներին: Հայտում նշված փաստաթղթերի բացակայության, կիսատ կամ կեղծ լինելու դեպքում հայտը դուրս է մնում մրցույթից: Պարտադիր պատասխան պահանջող դաշտերից որևէ մեկը չլրացնելու դեպքում հայտը նույնպես դուրս է մնում մրցույթից:

Դիմում-հայտ

Դիմում-հայտը կազմված է լինելու հետևյալ բաժիններից՝

- Ընդհանուր տեղեկություններ
- Անձնական տվյալներ
- Ծրագրի նկարագրություն
- Բյուջե
- Այլ ծրագրերին մասնակցություն
- Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Եզրափակիչ դրույթներ

Հաղթող մասնակիցներին ընտրելուց անմիջապես հետո, նրանց հետ կկնքվի աշխատանքների իրականացման պայմանագիր: Գումարը կփոխանցվի նրանց հաշվին իրականացվող փուլերին համապատասխան: Ամբողջ ծրագրի իրականացման ընթացքում տեղի են ունենալու ստուգիչ այցեր: Մասնակիցները պարտավոր են լինելու, ամեն փուլի ավարտից հետո, ներկայացնել ֆինանսական հաշվետվություն:

Դրամաշնորհային մրցույթին հաղթելու դեպքում մասնակիցները դառնում են «Գյուղական Տուրիզմի Զարգացման» ծրագրի շահառու և պետք է ունենան որոշակի պարտավորություններ՝ համաձայն կնքվող պայմանագրի:

Մաղթում ենք հաջողություն